ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

-- փետրվարի 2021 թվականի №-Ա
քաղ. Երևան

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՆՈՒԲԱՐԱՇԵՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ Բ ԱՅԳԵՏԱՐԱԾՔԻ 10-ՐԴ ԹԱՂԱՄԱՍԻ №15 ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԴԻՏԱՀՈՐԻ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) որ քաղաքացի Արմեն Նորիջանյանը (այսուհետ՝ Դիմող անձ) սույն թվականի հունվարի 19-ին դիմել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերություն (այսուհետ՝ Ընկերություն)՝ Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի Բ այգետարածքի 10-րդ թաղամասի №15 հողամասին հարակից դիտահորի սպառման համակարգը (այսուհետ՝ Սպառման համակարգ) էլեկտրական ցանցին միացնելու խնդրանքով,

բ) որ Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի ղեկավարի կողմից տրամադրված 2021 թվականի հունվարի 18-ի №33/01-03 տեղեկանքի համաձայն՝ նշյալ հասցեում շինարարության թույլտվությամբ կառուցվել է դիտահոր և օգտագործվում է Դիմող անձի կողմից,

գ) Ընկերության 2021 թվականի փետրվարի 5-ի №ԴԳ527 և Դիմող անձի 2021 թվականի փետրվարի 8-ի գրությունները, որոնց համաձայն՝ վերջիններս առարկություն չունեն Սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացումը սույն որոշմամբ սահմանված ընթացակարգով իրականացնելու վերաբերյալ,

և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358Ն որոշմամբ հաստատված՝ էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների 13.8-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել, որ Սպառման համակարգի էլեկտրական ցանցին միացումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358Ն որոշմամբ հաստատված՝ էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների 14.4-րդ կետով սահմանված կարգով տեխնիկական պայմաններ տրամադրելու միջոցով՝ կանոնների 13.2 կետի 5-րդ ենթակետով պահանջվող փաստաթղթի փոխարեն հիմք ընդունելով Նուբարաշեն վարչական շրջանի ղեկավարի կողմից տրամադրված 2021 թվականի հունվարի 18-ի №33/01-03 տեղեկանքը:

2. Ընկերությանը չի թույլատրվում Դիմող անձից պահանջել կատարել վճարումներ, տրամադրել հատուցում, ներկայացնել տեղեկատվություն և փաստաթղթեր կամ նրան ծանրաբեռնել պարտավորություններով, եթե դրանք սահմանված չեն էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններով, այլ նորմատիվ իրավական ակտերով, սույն որոշմամբ կամ էլեկտրամատակարարման պայմանագրով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Դիմող անձին և Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- փետրվարի 2021թ.